ՍԱՂՄՈՍ 95

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Փառաբանություն Աստծուն և զգուշացում անհավատության դեմ	Երկրպագության և հնազանդության կոչ	Օրհներգություն Աստծուն որպես Թագավոր	Փառաբանության երգ	Հրավերք փառաբանության
MT ներածություն չկա				
	95:1-5			
95:1-5		95:1-5	95:1-5	95:1-2
				95:3-5
	95:6-7բ			
95:6-7		95:6-7բ	95:6-7բ	95:6-7բ
	95:7գ-11			
		95:7գ-11	95:7գ-11	95:7գ-9
95:8-11				
				95:10-11

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 95:1-5

1Եկե՛ք երգով փառաբանենք ՏԻՐՈՋԸ,
Ցնծությամբ աղաղակենք մեր փրկության վեմին:
2Գոհությամբ գանք Նրա ներկայության առջև
Ու սաղմոսներով ցնծության աղաղակ բարձրացնենք Նրան:
3Քանի որ ՏԵՐԸ մեծ Աստված է ու Թագավոր՝
Բոլոր աստվածներից բարձր:
4Նրա ձեռքում են երկրի խոր տեղերը,
Ու լեռների ուժը Նրանն է:
5Իրն է ծովը, ու Ինքը շինեց այն,
Եվ Իր ձեռքերն ստեղծեցին ցամաքը:

95:1-5 Այս պարբերությունը կոչ է (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ և 4 ԸՂԱԿԱՆՆԵՐՈՎ) փառաբանելու ՅԱՀՎԵԻՆ որպես Թագավոր և Արարիչ:

1. եկե՛ք – BDB 229, KB 246, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. եկե՛ք երգենք ցնծությամբ – BDB 943, KB 1247, *Piel* ԸՂԱԿԱՆ, տես՝ 66:1, 81:1
3. եկե՛ք ցնծությամբ աղաղակենք – BDB 929, KB 1206, *Hiphil* ԸՂԱԿԱՆ
4. գանք Նրա ներկայության առջև (այսինքն՝ տաճարը) – BDB 869, KB 1068, *Piel* ԸՂԱԿԱՆ
5. ցնծության աղաղակ բարձրացնենք – BDB 929, KB 1206, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂԱԿԱՆ իմաստով

Սրանք կոչեր են ուղղված տաճարում երկրպագության համար (տես՝ h.2ա): Երկրպագությունը անհրաժեշտ է, քանի որ ՅԱՀՎԵՆ՝

1. մեր փրկության Վեմն է. այս և նմանատիպ նկարագրություններ գործում են որպես տիտղոս-ներ հիմնականում Սաղմոսներում և Եսայու գրքում:
   ա. իմ փրկության Աստվածը – Սաղմ.88:1 (տես՝ Սաղմ.24:5, 27:9)
   բ. իմ Փրկիչ և իմ Աստված – Սաղմ.42:5-6, 11, 43:5
   գ. իմ վեմ և իմ փրկություն – 2 Թագ.22:47, Սաղմ.62:2,7, 89:26, 94:22, 95:1
   դ. Աստված իմ Փրկիչը – Սաղմ.65:5, 68:19, 85:4, 149:4 (տես՝ NIDOTTE, հատոր 2, էջ՝ 561):
2. մեծ Աստված (*Էլ*), տես՝ Սաղմ.48:1, 96:4, 135:5, 145:3
3. մեծ Թագավոր (տես՝ 1 Թագ.8:7, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԿ-ՅԱՆ ՏԻՏՂՈՍՆԵ ՀԱՏՈՒԿ ԵԿՈՂԻ ՀԱՄԱՐ</u>)
4. վեր բոլոր աստվածներից (տես՝ Ելից 15:11, 18:11, Սաղմ.96:4, 97:9, 135:5. սա *Էլոհիմի* գործածությունն է, երբ կիրառվում է դրա ՀՈԳՆԱԿԻ ձևը, տես՝ Ելից 3:6, 20:3, տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>, Գ.

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>

Հրեական Սերտողության Աստվածաշունչը, էջ՝ 1389, կարծում է, որ այս Սաղմոսը, ինչպես դրան նախորդող և հաջորդող մի քանի սաղմոսներ, կապ ունեն արքայական թագադրման արարողա-կարգի հետ (հավանաբար ամենամյա): Դրանք կապում են այն Սաղմ.47:1-2, 98:4-6-ի հետ:

95:1 «մեր փրկության վեմը» Իսրայելի Աստծո նկարագրությունը որպես վեմ պարբերաբար կրկնվում է (տես՝ 2 Օրինաց 32:4, 15, 18, 30, 31, 1 Թագ.2:2, 2 Թագ.22:3, 32, 47, 23:3, Սաղմ.18:2, 31, 46, 28:1, 61:2,7, 78:35, 89:26, 92:15, 94:22): Այս խոսքը նկարագրում է Նրան որպես ուժեղ, կայուն, հավիտենական և ապահովության ու անվտանգության վայր:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)</u>

95:4 «երկրի խոր տեղերը» «Խորը» (חקר, BDB 350, KB 571) միայն կարելի է գտնել այստեղ: «Երկիր» բառի հետ այն ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ կապի մեջ է և համազոր է «լեռների գագաթներ» խոսքին: Սա ըստ երևույթին ֆիզիկական ստեղծագործությանը վերաբերող պոետիկ տող է (այսինքն՝ Սաղմ.95:4-5), որն արտահայտում է ՅԱՀՎԵԻ կողմից այս մոլորակի վրա առկա ֆիզի-կական բոլոր էակների արարումը: Նա է Թագավորն ու Արարիչը ֆիզիկական իրականության (ոչ մի այլ ՀՄԱ աստվածներ կամ առասպելներ): Այսօր հարցն այսպես կձևակերպվեր. «Արդյո՞ք ֆիզի-կական ստեղծագործությունը պատահական է, թե՞ նպատակային»: Հավատացյալները գոչում են «նպատակային»:

Պարզապես ևս մեկ հավելյալ միտք: Նախորդ պարբերության մեջ ես կապեցի Սաղմ.95:4-ը 95:3ա-ի հետ: Այն հնարավոր է կապել 95:3բ-ի հետ: Եթե այդպես է, ապա «խորը տեղերը» և «լեռները» կհամարվեին ՀՄԱ-ում աստվածների համար գտնվելու վայրերը: Այդ տեղերում ոչ թե «աստվածներն» էին (*Էլոհիմ*), այլ ՅԱՀՎԵՆ՝ ստեղծագործության *Էլոհիմը* (Ծննդոց 1-2), որը թագավորում է:

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ</u>, Գ.

❖ **«ձեռք»** Նկատե՛ք, որ «ձեռք» բառը կրկին ի հայտ է գալիս Սաղմոս 95:5-ում:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈՒՆ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԿ ԼԵԶՈՒՆ

95:5 «Ծովը . . . Ինքը շինեց այն» Զարմանալի է, որ Ծննդոց 1-ում միակ երկրային տարրը,որը խոսքով չի արարվել, ջուրն է (աղի և թարմ): Աստված բաժանում է ջրերը և վերահսկում դրանց սահմանները, սակայն չի ասվում, որ Նա ստեղծեց դրանք, ինչպես և Սաղմոս 104-ում:

Սակայն, աստվածաբանական այն պնդումը, որ Նա է ամեն բան ստեղծել՝ ներառյալ «ծովերը», կարդում ենք Նեեմ.9:6, Սաղմ.95:5, 146:6, Հովնան 1:9: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁՐԵՐ:

Նաև նկատեք, որ Սաղմ.95:5բ պնդում է, որ Աստված ստեղծեց (BDB 427, KB 468, *Qal* ՎԱՂԱ-ԿԱՏԱՐ) ցամաքը: Ծննդոց 1:9-10 հայտարարում է, որ այն տեղի է ունեցել արտասանված խոսքի միջոցով: Հիշե՛ք, որ սա ՀՄԱ-յան նկարագրություն է: Մենք չպետք է աստվածաբանություն ստեղծենք պոետիկ տողերի վրա: Կարծում եմ Ծննդոց 1-11 գլուխները թե՛ պատմական են և թե՛գրական: Խնդրում եմ նայե՛ք Ծննդոցի շուրջ առցանց տրված բացատրական մեկնաբանությունը www.freebiblecommentary.org –ում: Արևմտյան, ժամանակակից ժողովուրդները չափազանց շատ գրական և ատոմիստիկ են Սուրբ Գրքին հանդեպ իրենց մոտեցումներում (տես՝ առցանց Սեմինար Աստվածաշնչի մեկնաբանության շուրջ): Մի գիրք, որն իրապես օգնել է ինձ, Ջոն Հ. Ուոլթնի *Ծննդոց Մեկի կորսված խոսքը. Հնագույն տիեզերագիտություն:*

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 95:6-7
[6]Եկե՛ք, երկրպագե՛նք ու խոնարհվե՛նք,
Ծնկի գանք մեզ արարող ՏԻՐՈՋ առջև:
[7]Քանի որ Նա մեր Աստվածն է,
Ու մենք Նրա արոտի ժողովուրդն ենք
Ու Նրա ձեռքի ոչխարները:
Եթե այսօր Նրա ձայնը լսեք,

95:6-11 Այս պարբերությունը ուղղված է Ուխտի ժողովրդին, նրանց կոչ անելով՝

1. երկրպագության (Սաղմ.95:6, այսինքն՝ տաճարում)
   ա. եկե՛ք (բառացի՝ «ներս մտե՛ք», մեկ այլ բառ Սաղմ.95:1-ից, սակայն համազոր) – BDB 97, KB 112, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
   բ. եկեք երկրպագենք – BDB 1005, KB 295, *Hishtaphel* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ԸՂՁԱԿԱՆ իմաստով
   գ. եկեք խոնարհվենք – BDB 502, KB 499, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
   դ. եկեք ծնկի գանք – BDB 138, KB 159, *Qal* ԸՂՁԱԿԱՆ
2. հավատքով պատասխանելու՝ արձագանքելու (Սաղմ.95:7)
3. խստասիրտ չլինելու, ինչպես որ անցյալում էին (այսինքն՝ անապատում դեգերելու շրջանում, Սաղմ.95:8-11):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

95:6 «մեզ արարող» Ծննդոց 2:7 նկարագրում է Ադամի հատուկ արարումը: Կենդանիները ասվում է, որ նույնպես ստեղծվեցին երկրի հողից՝ Ծննդոց 2:19-ում (նույն ԲԱՅԸ, BDB 427, KB 428):

Սաղմ.139:13-16-ում («հյուսել», BDB 697, KB 754) և Հոբ 31:15 («պատրաստել», BDB 793, KB 889, նաև Սաղմ.139:15): Աստված ստեղծեց յուրաքանչյուր մարդու արգանդի մեջ (տես՝ Սաղմ.139: 13-16): Տարբերությունը գրականական է, սակայն ճշմարտությունն այն է, որ Աստված արեց և անում է (տես՝ Սաղմ.100:3, 149:2, Եսայի 17:7, Ովսեա 8:14): Մարդիկ Աստծո գլուխգործոցն են՝ Իր

պատկերով ու նմանությամբ (Ծնն.1:26-27) հաղորդակցության նպատակով: Սա բաց թողնելը նշանակում է բաց թողնել մարդկության արժեքն ու ինքնությունը (տես՝ Սաղմոս 8):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

95:7գ-11 Հետաքրքիր է, որ ՀԿ-ը այլ կերպ է բնութագրում անապատի դեգերման շրջանը:

1. դրական՝
   ա. 2 Օրինաց 32:10-14
   բ. Երեմիա 2
   գ. Ովսեա 2:15, 9:10, 11:1-2
2. բացասական՝
   ա. Թվոց 14:1-17
   բ. Սաղմ.95:8-11
   գ. Եզեկիել 23

Սա մեր բոլորիս կյանքի դիլեման է: Մեզնից և ոչ ոք կատարյալ չէ: Կան թե՛ լավ օրեր և թե՛ վատերը, ուժեղ և թույլ կողմեր: Փառք Աստծուն Նրա՝

1. անփոփոխ, ողորմած բնավորության համար
2. Նոր Կտակարանի համար (այսինքն՝ Երեմիա 31:31-34)
3. Մեսիայի համար (այսինքն՝ ՆԿ-ի ավետարանի հայտնության)

95:7 Աստված որպես Հովիվ և Իր ժողովուրդը որպես ոչխարներ՝ տարածված ՀԿ-յան նկարագրություն է (տես՝ Սաղմոս 23-ի գրառումները):

Հովվի և ոչխարների միջև մտերմությունը ուժեղ է և հարատև: Ծիծաղելի է և վտանգավոր ոչխարների համար իրենց հովվին չլսելը: Մարդկության անկումը մեր բոլորի վրա ազդել է:

1. նրանք չլսեցին (Սաղմ.95:7գ, մեջբերված է Եբր.3:7-11, 15, 4:7-ում)
2. նրանք խստացրեցին իրենց սրտերը
   ա. Մերիբայում (BDB 937 II, «կռվատեղի»): Ելից 17:7, Թվոց 20:13, 2 Օրինաց 33:8
   բ. Մասսայում (BDB 650 III, «փորձել») – Ելից 17:7, 2 Օրինաց 6:16
3. նրանք փորձեցին Աստծուն, Թվոց 14:22

Անգլերեն մի քանի թարգմանություններ սկսում են մի նոր պարբերություն Սաղմ.95:7գ-ում, քանի որ Սաղմոսի այս հատվածում ՅԱՀՎԵՆ է սկսում խոսել (այսինքն՝ Սաղմ.95:7գ-11):

❖ **«եթե դուք . . .»** Սա մատնանշում է պայմանական ուխտը: Համար 8 շարունակում է այս միտքը: Անհնազանդությունն ունի սարսափելի հետևանքներ (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 95:8-11
[8]Մի՛ խստացրեք ձեր սրտերը, ինչպես Մերիբայում էր՝
Փորձության օրն անապատում,
[9]Որտեղ ձեր հայրերն Ինձ փորձեցին,
Քննեցին Ինձ, թեև տեսել էին Իմ գործերը:
[10]Քառասուն տարի վշտացա *այս* սերնդից, ու ասացի.
«Նրանք սրտով մոլորված ժողովուրդ են,
Եվ չեն ճանաչել Իմ ճամփաները»:
[11]Ուստի իմ բարկության մեջ երդվեցի,
Որ նրանք իմ հանգիստը չեն մտնելու:

95:9 Այն փաստը, որ Իսրայելը վերապրել էր ելիցի անապատում տեղի ունեցած հրաշքները և պաշտպանությունը, մատակարարումը, նրանց անհավատությունը և վստահության պակասը շատ ավելի էր լրջացնում:

95:10 «քառասուն տարի» Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ ԳՐՔՈՒՄ ԱՌԿԱ ՍԻՄՎՈԼԻԿ ԹՎԵՐԸ, #7: Քառասունը հաճախ կլոր թիվ է: Ելիցը տևել է 38 տարի:

❖ **«սիրտ»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԻՐՏ

❖ **«նրանք չեն ճանաչել Իմ ճամփաները»** Ուշադրություն դարձրե՛ք, որ այստեղ առանցքայինը վարդապետությունը չէ (այսինքն՝ տեղեկությունը), այլ ապրելակերպ հանդիսացող հավատարմությունը՝ հիմնված Մովսիսական օրենքի կատարման վրա (այսինքն՝ «երկու ճանապարհները»):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԱՀԵՏԸ, ՃԱՆԱՊԱՐՀԸ

95:11 «Իմ բարկության մեջ երդվեցի» Մարդիկ ստիպված են գործածել այս աշխարհի բառապաշարը, որպեսզի նկարագրեն Աստծուն՝ Նրա խորհուրդները, զգացմունքները և գործողությունները, սակայն դրանք միմիայն նկարագրություններ են:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ

Այս պատկերները ճիշտ են, սակայն ոչ սպառիչ: Դրանք իսկապես հաստատում են անհավատության և ապստամբության հետևանքների իրողությունը՝ թե՛ ժամանակի մեջ և թե՛ դրանից դուրս: Իսրայելացիների այս սերունդը՝ ներառյալ Ահարոնը և Մովսեսը, չմտան Քանանի երկիր (տես՝ Եբրայեցիների 3-4, 2 Օրինաց 3:20, 12:9, 25:19):

Այս սաղմոսերգուն աղերսում է երկրպագություն, վստահություն և հնազանդություն ՅԱՀՎԵ-ԻՆ: Նա արժանի է երկրպագության և վստահության:

Եբրայեցիների 3-4 գործածում է այս տեքստը, որպեսզի հաստատի «հանգիստ» բառի երեք նշանակությունները՝

1. Աստծո հետ խաղաղություն
2. Խոստացված Երկիրը
3. երկինքը

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊԱՀԵԼ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Բացատրե՛ք «մեր փրկության վեմը» արտահայտության հավանական աղբյուրները:
2. Ի՞նչ կապ ունի Սաղմ. 95:4-ը Սաղմ. 95:3բ-ի հետ:
3. Ինչո՞ւ «ծովը» Ծննդոց 1-ում նշված չէ որպես ստեղծված *Էլոհիմի* կողմից:
4. Բացատրե՛ք Սաղմոս 95:7գ-ի անկանխատեսելիության առնչությունները (այսինքն՝ «եթե»):
5. Ինչպե՞ս են մենք փորձում՝ ստուգում Աստծուն:
6. Բացատրե՛ք «հանգստություն» տերմինի կիրառությունը Եբրայեցիների 3-4-ում, որը մեջբերում է այս Սաղմոսը: